ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Հորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ, N 103-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-112-0081-0011 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21) ենթակետով, 35-րդ հոդվածի 1-ին կետի 16) և 18) ենթակետերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 204.1-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48.1-րդ, 57-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման կարգի 14[1] կետով և 46.2 կետի գ) ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով համայնքի սեփականության իրավունքի N 31072023-06-0034 վկայականը (գաղտնաբառ՝ PCZBBQ7ACGZD), համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող՝ համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 6-րդ փողոց, 10/2 հասցեում գտնվող, 06-112-0081-0011 կադաստրային ծածկագրով, 0.01313 հեկտար մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով, 10 տարի ժամկետով՝ տարեկան 1 000 (մեկ հազար) ՀՀ դրամ արժեքով, տրամադրել «Սիմոնյան» կրթական հիմնադրամին «Թումոն տուփի մեջ» նոր կենտրոն հիմնելու նպատակով:
2. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

		ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ			

2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԱՄՐԱՍՏԱՆ	ՋԱՆԻՆՅԱՆ			
9.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
10.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ՁԱԽԱՐՈՎ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2023թ., դեկտեմբերի 18,
Լոռու մարզ, ք. Ալավերդի